ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » «_____» 2021թ. N -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՉԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևան համայնքի վարչական տարածքում տեղական տուրք վճարողի կողմից համապատասխան թույլտվություն ստանալուց հետո գործունեությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան չկազմակերպելու դեպքում տեղական տուրք վճարողի նկատմամբ նախազգուշացում կամ թույլտվության կասեցում կամ թույլտվության դադարեցում կիրառելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
_____ թվականի _____ի _____-ի
_____-Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՉԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևան համայնքի վարչական տարածքում տեղական տուրք վճարողի կողմից համապատասխան թույլտվություն ստանալուց հետո գործունեությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան չկազմակերպելու դեպքում տեղական տուրք վճարողի նկատմամբ նախազգուշացում կամ թույլտվության կասեցում կամ թույլտվության դադարեցում կիրառվում է Երևանի քաղաքապետի կողմից:

2. Տեղական տուրք վճարողի նկատմամբ նախազգուշացում կամ թույլտվության կասեցում կամ թույլտվության դադարեցում կիրառելու համար Երևանի քաղաքապետի կողմից հարուցվում է վարչական վարույթ՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Վարչական մարմնի կողմից վարչական վարույթ սեփական նախաձեռնությամբ հարուցվում է՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից վարչական վարույթ հարուցելու մասին միջնորդությունը, որը ներկայացվում է էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից վարչական վարույթ հարուցելու մասին միջնորդությունը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

1) վարչական վարույթ հարուցելու մասին միջնորդությունը ներկայացնող ստորաբաժանման և դրա ղեկավարի տվյալները, ամիս, ամսաթիվ և տարեթիվը, միջնորդության հասցեատեր,

2) այն փաստական հանգամանքները, որոնք վկայում են թույլտվություն ստացողի կողմից գործունեությունը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան չկազմակերպելու դեպքերի մասին,

3) տեղական տուրք վճարողի կողմից թույլ տրված իրավախախտման նկարագրությունը և ուսումնասիրության արդյունքները՝ հղում կատարելով այն իրավանորմին, որի պահանջները խախտվել են,

4) մասնագիտական կարծիքը կամ փորձագիտական եզրակացությունները,

5) առաջարկություն՝ տեղական տուրք վճարողի նկատմամբ կիրառման ենթակա միջոցի վերաբերյալ:

5. Վարչական վարույթ հարուցելու մասին միջնորդությունը քննարկվում է այն ստանալուց հետո եռօրյա ժամկետում, ինչի մասին հայտնվում է միջնորդության նախաձեռնողին։

6. Այն դեպքում, երբ վարչական վարույթը հարուցվում է թույլտվություն տված Երևան քաղաքի համապատասխան վարչական շրջանի ղեկավարի նախաձեռնությամբ, ապա կիրառման ենթակա միջոցի վերաբերյալ անհրաժեշտ է ստանալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագիտական ստորաբաժանման կարծիքը։

7. Վարչական վարույթի հարուցման մասին միջնորդության քննարկման ընթացքում, եթե առաջացել են այնպիսի հարցեր, որոնց պատասխանելու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ապա վարույթն իրականացնող մարմինը կարող է դիմել և ստանալ այլ մարմինների մասնագետների կարծիքներ կամ փորձագետների եզրակացություններ։

8. Տեղական տուրք վճարողի նկատմամբ կիրառվում է նախազգուշացում կամ թույլտվության կասեցում կամ թույլտվության դադարեցում՝ հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՉԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ավագանին իրականացնում է նույն օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտավորությունը խախտելու դեպքում համայնքի ղեկավարը ավագանու որոշմամբ սահմանված կարգով իրավունք ունի տուրք վճարողի նկատմամբ կիրառելու՝ 1) նախազգուշացում, 2) թույլտվության կասեցում, 3) թույլտվության դադարեցում, իսկ 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված համապատասխան թույլտվությունն ստանալուց հետո տուրք վճարողը պարտավոր է իր գործունեությունը կազմակերպել և իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Երևան քաղաքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով սահմանված թույլտվությունները տրամադրվում են Երևանի քաղաքապետի կողմից, բացառությամբ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 96-րդ հոդվածով նախատեսված թույլտվությունների և Երևան քաղաքի ավագանու որոշումներով թույլտվության տրամադրման լիազորությունը վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակված լինելու դեպքում:

Երևան համայնքի վարչական տարածքում որոշ տնտեսվարողներ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված թույլտվությունները ստանալուց հետո իրենց գործունեությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան չեն կազմակերպում կամ իրականացնում, ինչը հանգեցնում է այլ տնտեսվարողների և համայնքի բնակիչների իրավունքների խախտմանը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտմամբ գործունեություն իրականացնող տնտեսվարողների նկատմամբ միջոցներ կիրառելու նպատակով մշակվել է սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՉԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի վարչական տարածքում տեղական տուրք վճարողի կողմից համապատասխան թույլտվություն ստանալուց հետո գործունեությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան չկազմակերպելու դեպքում տեղական տուրք վճարողի նկատմամբ նախազգուշացում կամ թույլտվության կասեցում կամ թույլտվության դադարեցում կիրառելու կարգը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՉԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի վարչական տարածքում տեղական տուրք վճարողի կողմից համապատասխան թույլտվություն ստանալուց հետո գործունեությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան չկազմակերպելու դեպքում տեղական տուրք վճարողի նկատմամբ նախազգուշացում կամ թույլտվության կասեցում կամ թույլտվության դադարեցում կիրառելու կարգը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ